ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 099 11 30 99
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.06.2013թ.
201-ի 7

ՀՀ քաղաքաշինության նախարար
պարոն Սամվել Թադեւոսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Թադեւոսյան,

2013թ-ի ապրիլի 3-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը իր թիվ 196-ի 8 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ քաղաքաշինության նախարարությանը եւ խնդրել էր տրամադրել 2012թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները:

Ի պատասխան՝ ԻԱԿ-ը ստացել էր նախարարության 18.04.2013թ. թվագրված պատասխան գրությունը, որով նախարարությունը մերժել է տրամադրել խնդրվող տղեկությունները՝ պատճառաբանելով, որ դրանք պարունակում են առևտրային գաղտնիք այն կազմակերպությունների վերաբերյալ, ում հետ կնքվել են պայմանագրերը:

Գտնում ենք, որ նախարարության մերժումն անհիմն է, քանի որ, մի կողմից, խոսքը գնում է պետական գնումների եւ պետական բյուջեից ծախսվող գումարների մասին, մյուս կողմից՝ մեկ անձից կատարված գնումների պայմանագրերը հրապարակային փաստաթղթեր են, բազմիցս (տարբեր տարիների համար) հրապարակվել են տարբեր մարմինների, այդ թվում՝ բոլոր նախարարությունների կողմից: Ուստի, չի կարող պայմանագրում կազմակերպության վերաբերյալ տեղեկությունը մի դեպքում համարվել գաղտնիք, մյուս դեպքում՝ ոչ: Սահմանափակումը կամ հրապարակայնությունը պետք է հավասարապես կիրառելի լինի բոլոր համանման դեպքերում, իսկ օրենքը պետք է լինի կանխատեսելի եւ կիրառվի միատեսակ:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել 2012թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան